Ուխտաւորների բազմութիւնը հետզհետէ ամբոխւում էր վանքի մէջ. տեղի նեղութիւնից արձակ շարժմունք գործել անկարելի էր. մարդ դժուարանում էր ազատ շունչ քաշել: Աբեղաների ահագին խումբը իրանց աղաղակներով, խրատներով եւ մինչեւ անգամ հայհոյանքներով, չէին կարողանում կարգ պահպանել բազմութեան մէջ: Խռովութիւնը գնալով սաստկանում էր: Ես առաջարկեցի մերայիններին դուրս գնալ. սկսեցինք զօռով պատառել ամբոխը, մինչեւ կարողացանք հասնել վանքի դռանը: Նոյն միջոցին Սօնան թեքոեցաւ դէպի ինձ եւ խուլ կերպով ասաց՝ «արեւը մտնելէն յետոյ ե՛կ «Կաթնաղբիւրի» մօտ»...

ԼԶ. ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱԲԵՂԱՆ

«Կաթնաղբիւրի՛» մօտ...: Հիմա ես հասկանում եմ թէ ինչո՛ւ Սօնան այնտեղ նշանակեց տեսութեան համար: «Կաթնաղբիւրն» այն աղբիւրներից էր, որոնք ժողովրդի մէջ վայելում են սրբազան նշանակութիւն: Նրան կոչում էին «Կաթնաղբիւր» այն պատճառով, որ ժողովրդի մէջ պահպանոել էր մի այսպիսի աւանդութիւն, իբր թէ այն աղբիւրի մէջ ծորեցրել էր տիրամայրը մի կաթիլ իր սուրբ կաթնից: Նրա ջուրն ունէր բժշկական զօրութիւն ոչ թէ իր մէջ գտնուած հանքային բաղադրութեանց պատճառով, ոչ, ջուրը հասարակ մաքուր ջուր էր, այլ նա ունէր գերբնական յատկութիւններ: Նրա մէջ՝ լոացողը փրկւում էր իր ցաւերից, նաեւ կատարւում էին նրա սրտի այս եւ այն ցանկութիւնները: Լողացողն ընտրում էր այնպիսի ժամանակ, որ ոչ ոք չխռովէր նրա հանգստութիւնը, ոչ ոք չխանգարէր այն խորհրդական պայմանները, որ նա պէտք է կատարէր լոացոելու ժամանակ:

Ա՜խ, որպիսի՜ անհամբերութեամբ սպասում էի այն օր արեւի մտնելուն: Կարծես Յեսոի ձեռքը մեխել էր նրան երկնքի վրայ, տեղիցը չէր շարժւում: Ես համբերել չկարողացայ եւ գնացի աւելի շուտ, քան Սօնայի նշանակած ժամանակը:

Վանքի պարիսպների մօտ, երկայն գերանների գլխին կապած չվանի վրայ խաղում էր մի մանկահասակ լարախաղաց. նա իր գոյնզգոյն, խայտաճամուկ զգեստով եւ զարմանալի ճարպկութիւններով յափշտակել էր ռամկի հիացմունքը: Ուխտաւորների բազմութիւնը, տաքացած կրօնական զգացմունքներով, շրջապատել էին ջամբազին. նրանք օրհնում էին «Մուշի սուլթան սուրբ Կարապետի» հրաշագործութիւնը, որ տոել էր նրան այնքան շնորհ եւ ճարպկութիւն: